ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N ՏՀՏ-1227

ք. Երևան «26»« հունվար» 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա.Պողոսյանի, (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), 1227 «Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 424114600 /չորս հարյուր քսանչորս միլիոն մեկ հարյուր տասնչորս հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ գումար (ներառյալ ԱԱՀ), ընդ որում՝

1. 11001 «Էլեկտրոնային կառավարում» միջոցառման գծով 184557300 ՀՀ դրամ,
2.11002 «ՏՀՏ բովանդակություն և հեռավար ուսուցում» միջոցառման գծով 144557300 ՀՀ դրամ,
3.11003 « ՏՀՏ ենթակառուցվածքների ապահովում և սպասարկում» 95000000 ՀՀ դրամ,

իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. սույն պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, նախարարությունը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում տեղեկացնում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպության կատարողական հաշվետվությունները

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8 չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսում և խնայողություն) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2021 թվականի դեկտեմբերի 20 -ը:

2.4.9 ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը (հրամանով հաստատված կարգի համաձայն և ժամկետներում) ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են ՊՈԱԿ-ում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը կտրամադրի համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ն ա խ ա ր ա ր ու թ յ ու ն	Կ ա զ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Կառավարական 2 շենք	Երևան, Բուռնազյան 37
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011036721	Հ/Հ 900018005737
Հ/Հ 900011036739	ՀՎՀՀ 01550374
Հ/Հ 900011036747	
ՀՎՀՀ 02698732	
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ն. Հարությունյան	_____ Ա. Գրիգորյան
Կ.Տ (ստորագրություն)	Կ.Տ (ստորագրություն)

Հավելված
2021 թ. հունվարի 26-ին
կնքված N ՏՀՏ - 1227 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում» բյուջետային ծրագրի

N N ը/կ	Իրականացվելիք միջոցառման				
	անվանումը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա-ժամկետը	Գումարը (հազ. դրամ)
1	Էլեկտրոնային կառավարում	Հայաստանի կրթական ցանցի մշտադիտարկման իրականացում: Կենտրոնական հանգույցի սերվերների սպասարկում՝ արտաքին միջամտություններից ցանցի պաշտպանություն, ինտերնետային պարունակության ֆիլտրում, հակավիրուսային պաշտպանություն, ուսումնական հաստատություններին էլեկտրոնային հասցեների տրամադրում: Հայաստանի կրթական ցանցում ընդգրկված ուսումնական հաստատություններին մատակարարված կապի առկայության, որակի, հաստատությունների օգտագործած ինտերնետային բովանդակության նկատմամբ մշտական հսկողության իրականացում, վիճակագրության վարում, վերլուծություն: ՀՀ ԿԳՄՍ նախարարության աշխատակազմի համակարգիչների և ՏՀՏ միջոցների սպասարկում:	Հայաստանի կրթական ցանցի կենտրոնական հանգույցը անխափան և շուրջօրյա աշխատում է՝ ապահովելով 1414 ուսումնական հաստատություններին մեկ կենտրոնում միակցելու գործընթացը: Սպասարկվում են ցանցում ընդգրկված բոլոր ուսումնական հաստատությունների էլեկտրոնային հասցեները: Իրագործվում են ուսումնական հաստատություններում կապի առկայության և օգտագործված ինտերնետային բովանդակության մշտադիտարկումներ, կազմվում համապատասխան հաշվետվություններ: Անխափան աշխատում են ՀՀ ԿԳՄՍ նախարարության աշխատակազմի համակարգիչներն ու ՏՀՏ միջոցները:	դեկ-տեմբեր 2021	184557,3
		Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի զարգացում և ամբողջականացում: Նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի համապատասխանեցում	Գործում է Կրթության կառավարման տեղեկատվական համակարգն իր ենթահամակարգերով: Նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգն ամբողջությամբ		

		օրենսդրական փոփոխություններին և ենթաօրենսդրական ակտերին:	համապատասխանում է ոլորտի օրենսդրական պահանջներին:		
		Առաջին դասարանցիների ընդունելության էլեկտրոնային հայտագրման համակարգի կատարելագործում:	Առաջին դասարանցիների ընդունելության էլեկտրոնային հայտագրման համակարգը լրամշակված է՝ նախորդ տարիներին առաջացած խնդիրները հաշվի առնելով:		
		Դպրոցներում գործածության ենթակա փաստաթղթերի թվայնացում:	Թվայնացված են դպրոցներում պարտադիր գործածության ենթակա փաստաթղթերից 7-ը:		
		Հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտների՝ Ediploma ավարտական փաստաթղթերի էլեկտրոնային համակարգի մշակում և ներդրում:	Մշակված և ներդրված է հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտների Ediploma ավարտական փաստաթղթերի էլեկտրոնային համակարգը:		
		Հանրակրթական ուսումնական հաստատություններում, ըստ մակարդակների, լիցենզիոն տեղերի բաշխման թվայնացում և ինտեգրում ԿԿՏՀ-ին՝ https://license.emis.am/տեղեկատվական ենթահամակարգի միջցով:	Հանրակրթական ուսումնական հաստատություններում, ըստ մակարդակների, լիցենզիոն տեղերի բաշխումը թվայնացված է և ինտեգրված է ԿԿՏՀ-ին:		
		Սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների ուսուցիչների կառավարման ենթահամակարգի մշակում:	Մշակված և ներդրված է սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների ուսուցիչների կառավարման ենթահամակարգը:		
		Ուսուցիչների մասնագիտական զարգացման էլեկտրոնային հարթակի մշակում ևձևավորում:	Մշակված և ներդրված է ուսուցիչների մասնագիտական զարգացման էլեկտրոնային հարթակը:		
		Կրթության առանձնահատուկ պայմանների գնահատման և արձանագրման համակարգի կատարելագործում՝ https://cde.emis.am/login:	Սովորողների՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման և արձանագրման տեղեկատվական համակարգը լրամշակված է:		
		12-ամյա կրթության ապահովման տեղեկատվական համակարգի կատարելագործում՝ https://oosc.emis.am:	12-ամյա կրթության ապահովման տեղեկատվական համակարգը լրամշակված է:		
		Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դիմորդների էլեկտրոնային հայտագրման համակարգի կատարելագործում՝ https://dimord.emis.am/:	Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դիմորդների էլեկտրոնային հայտագրման համակարգը լրամշակված և ներդրված է:		

		Հաշվետվությունների ստացման միասնական հարթակի զարգացում, կատարելագործում: ԿԿՏՀ ենթահամակարգերը շահագործող ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների պարբերական վերապատրաստումներ: Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (temis) լրամշակում և ներդրում: Ուսումնական հաստատությունների պետական միասնական վարչական ռեգիստրի ներդրում	Գործում է հաշվետվությունների ստացման համակարգը: Պարբերաբար իրականացվում են ԿԿՏՀ ենթահամակարգերը շահագործող ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների վերապատրաստումներ, ԿԿՏՀ ենթահամակարգերի շահագործման համար առկա են համապատասխան հմտություններով օժտված աշխատակիցներ: Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը լիարժեքորեն շահագործվում է: Ուսումնական հաստատությունների պետական միասնական վարչական ռեգիստրը ներդրված է և լիարժեքորեն շահագործվում է:		
		ԿԿՏՀ բովանդակության համապատասխանեցում ՀՀ կրթության օրենսդրության ընթացիկ և Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված փոփոխություններին: ԴԿՏՀ-ում ներգրավված շուրջ 1400 ուսումնական հաստատություններին աշխատանքային օրերին և ժամերին աջակցության տրամադրում՝ ծրագրային և տեխնիկական խնդիրների լուծման համար: Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ տարբեր վերլուծությունների իրականացում, տարեկան ամփոփ տեղեկատվության ներկայացվում: Ըստ անհրաժեշտության, հանրակրթության ոլորտը բնութագրող տեղեկատվության՝ ամփոփ տեղեկանքների, վիճակագրական տվյալների, աղյուսակների կազմում և տրամադրում ՀՀ ԿԳՄՍՆ-ին, ՀՀ ՖՆ-ին, ՀՀ	Մշակված է կրթության կառավարման տեղեկատվական համակարգի գործածության կարգի նախագիծը: Հավաքագրված, մշակված և ամփոփված են (ստանդարտ ավտոմատացված և բովանդակային) տվյալները: Պատրաստված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրական հաշվետվությունները և զեկույցները: Վարվում է հանրակրթության վարչական ռեգիստրը, ՀՀ ԿԳՄՍՆ են ներկայացվում հաստատված ձևերին ու ժամկետներին համապատասխան ամփոփ հաշվետվությունները: Ըստ անհրաժեշտության կպատրաստվեն վիճակագրական և այլ հաշվետվություններ, ամփոփ տեղեկանքներ՝ ըստ ՀՀ մարզերի, գյուղական և քաղաքային համայնքների, աշակերտների և ուսանողների թվաքանակների, հաստատությունների տիպերի, կրթական ծրագրերի աստիճանի և այլ անհրաժեշտ չափանիշների:		

		վիճակագրական կոմիտեին, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ին, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակին, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամին (ՅՈՒՆԻՍԵՖ), ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությանը (ՅՈՒՆԵՍԿՕ), ՋԼՄ-ներին, ԱԺ պատգամավորներին և պատգամավորական խմբակցություններին,այլ շահագրգիռ կազմակերպություններին: և այլն: ՀՀ դպրոցներում տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների համալրվածության և կիրառության ուսումնասիրության իրականացում. կկազմվեն հարցաթերթեր, կձևավորվի ընտրանք, բոլոր պետական դպրոցների կբաշխվեն իրենց համապատասխան էլեկտրոնային հարցաթերթեր: Լրացված հարցաթերթերի հավաքագրումից հետո կմաքրվեն SPSS բազաները, կճշգրտվեն և կլրամշակվեն տվյալները:	Մշակված է բոլոր գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ՏՀՏ կարիքի ուսումնասիրության վերլուծության և առաջարկների փաթեթը:		
2	ՏՀՏ բովանդակություն և հեռավար ուսուցում	Կրթության ոլորտի բոլոր շահառուների համար «Հայկական կրթական միջավայր» պորտալի (www.armedu.am) և ենթակայքերի շահագործում: Հայկական կրթական միջավայր» պորտալի, «Հայկական կրթական միջավայր» ֆորումի, «Պաշարների շտեմարան» և «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ» կայքերի աշխատանքների կազմակերպում, բովանդակային պարունակության հարստացում, ՀՀ ուսումնական հաստատությունների կայքէջերի տեխնիկական սպասարկում և խորհրդատվական աջակցություն:	• Պորտալի տեղեկատվությունը ավելացել է առնվազն 10%-ով: • • • «Հայկական կրթական միջավայր» ֆորումում (http://forum.armedu.am) կազմակերպվում են ավելի քան 100 կրթական քննարկումներ, որոնցից առնվազն 50-ը՝ մասնագիտական խորհրդատվական թեմաներ, • • «Պաշարների շտեմարան» կայքում (https://lib.armedu.am/) տեղադրվել են առնվազն 500 էլեկտրոնային կրթական պաշարներ, • • eTwinning Plus ծրագրի (http://etwinningplus.armedu.am) և «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ» (http://esource.armedu.am/) կայքերը անխափան աշխատում են, • • բոլոր դպրոցներին տրամադրվում է խորհրդատվական աջակցություն՝ դպրոցական կայքերի (https://schoolsite.am/) վարման նպատակով,	դեկ-տեմբեր 2021	144557,3

			• • Հեռավար ուսուցում» համակարգերում (http://elearning.armedu.am/ և https://dlc.armedu.am/) կազմակերպվում են դասընթացներ. «ՏՀՏ գործիքների կիրառությունը էլեկտրոնային ուսուցման կազմակերպման ժամանակ» նոր դասընթացը շուրջ 240 ուսուցիչների համար, շարունակվում են «Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ» թեմայով վերապատրաստումները շուրջ 240 ուսուցիչների համար, բացի այդ, հեռավար դասընթացի հմտություններին տիրապետող տարբեր առարկաների առնվազն 20 մասնագետներ հեռավար դասընթացներ են կազմակերպվում շուրջ 400 գործընկեր-ուսուցիչների համար, • • իրականացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքի (https://escs.am/) բովանդակային մասի անգլերեն և ռուսերեն լեզուներով թարգմանությունը, տեղադրվում են նյութերը:		
		«Շարժական ինտերնետային-համակարգչային կայան»-ի (ՇԻՀԿ) շահագործում. դպրոցներում հեռավար ուսուցման կազմակերպմանն աջակցելու նպատակով՝ ուսուցիչների վերապատրաստման և աջակցման նոր ծրագրի (ՏՀՏ հմտություններ, հեռավար ուսուցում. միջավայրեր, հարթակներ, համակարգեր, գործիքներ) իրականացում:	ՇԻՀԿ-ը Հայաստանի Հանրապետության առնվազն 60 դպրոցների ուսուցիչների համար կազմակերպում է դասընթացներ: Յուրաքանչյուր դպրոցում դասընթացներին մասնակցում է միջին հաշվով 15 հոգի:		
		Կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրերի համակարգում: Եվրամիության Իթվինինգ Պլյուս ծրագրի շարունակականության ապահովում: Կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրերի համակարգման և տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով՝ հանդիպումների, քննարկումների կազմակերպում, համատեղ աշխատանքների իրականացում:	Իթվինինգ Պլյուս ծրագրում ընդգրկված շուրջ 560 ուսումնական հաստատությունների ավելի քան 1800 դասավանդողների աշխատանքը համակարգվում է, ծրագրում ներգրավվածությունը ավելացնել է առնվազն 10%-ով:		

		Հեռավար ուսուցման կենտրոնի աշխատանքների կազմակերպում	ՀՀ տարածքում ընտրված հեռավոր/սահմանամերձ հարյուր դպրոցների համար, որտեղ չկան համապատասխան առարկայական մասնագետներ, մշակվել է էլեկտրոնային կրթության ապահովման ծրագիրը,իրականացվում է ծրագրի փորձարկումը:		
	ՏՀՏ ենթակառուցվածքների ապահովում և սպասարկում	Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում կապի հանգույցի, կապի սարքավորումների, տեղային համակարգչային ցանցերի և շահագործվող համակարգիչների ծրագրային սպասարկման համապատասխան համակարգչային տեխնիկական օժանդակման ծառայության ձեռքբերում: ՀՀ 1414 ուսումնական հաստատություններում կապի հանգույցի, կապի սարքավորումների, տեղային համակարգչային ցանցերի և շահագործվող համակարգիչների ծրագրային ապահովման սպասարկման իրականացում(հեռահար և ֆիզիկական սպասարկման միջոցով): Զանգերի սպասարկման կենտրոնի և հայտերի գրանցման ու հանձնարարությունների կառավարման առցանց տեղեկատվական համակարգի շահագործում:	Առկա է ծառայության ձեռքբերման պայմանագիրը՝ գնումների ընթացակարգով բաց մրցույթում ընտրված կազմակերպության հետ:	դեկ-տեմբեր 2021	95000,0
Ընդամենը					**424114,6**

Ն ա խ ա ր ա ր ու թ յ ու ն

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011036721
Հ/Հ 900011036739
Հ/Հ 900011036747
ՀՎՀՀ 02698732
Նախարարության գլխավոր քարտուղար՝

_____ Ն. Հարությունյան

Կ.Տ (ստորագրություն)

Կ ա զ մ ա կ ե ր պ ու թ յ ու ն

«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն»
ՊՈԱԿ
Երևան, Բուռնազյան 37
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018005737
ՀՎՀՀ 01550374

Տնօրեն՝

_____ Ա. Պողոսյան

Կ.Տ (ստորագրություն)